

ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկա՝ քաղաք Երևանում գտնվող Բժշկական համալսարանի ջեռուցման, օդափոխության, հովացման և օդորակման նախագիծը իրականացված են համաձայն պատվիրատուի առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի և ՀՀ-ում գործող Շին. Նորմերի ու կանոնների.

- .ՀՀ ՇՆ IV-12.02.01 Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում
- .ՀՀ ՇՆ II-7.01.96 Շինարարական կլիմայաբանություն
- .ՀՀ ՇՆ II-7.02.95 Շինարարական ջերմաֆիզիկա
- .СНИП 2.09.04.87 Общественные здания и сооружения
- .СанПиН II-2.1.3. Медицинские учреждения

Շենքում որպես ջերմության աղբյուր հանդիսանում առկա կաթսայատունը : Կաթսաները ապահովում են ջուր-ջերմատարի T₁=80 °C և T₂=60 °C ջերմաստիճանային պարամետրերը:

Շենքի հովացման և օդորակման համակարգերի սառնամատակարարման համար կաթսայատան տանիքի վրա նախատեսված է օդային հովացմամբ սառեցման ագրեգատը(չիլլերը), որը ապահովում է ջուր-ջերմատարի T₁=7 °C և T₂=12 °C ջերմաստիճանային պարամետրերը:

Ջեռուցում և հովացում:

Ջեռուցման և հովացման նախագիծն իրականացված է T_{դ^{Δմեռ}}=-19 °C և T_{դ^{ամ}}=35 °C արտաքին հաշվարկային ջերմաստիճանների համար:

Մենյակներում ներսի օդի պարամետրերը ընդունված են համաձայն նորմերի: Ընդունված են հաշվարկային հետևյալ ելակետային տվյալները.

Տարվա տաք ժամանակաշրջան

t_в=+22÷+25°C °C φ=50%

Տարվա ցուրտ ժամանակաշրջան

t_в=+18÷+22 °C φ=50%

Ներսի օդի նշված կլիմայական պարամետրերը պահպանվում են կամ ջերմություն արտադրող կաթսաների, կամ ցուրտ արտադրող սառեցման ագրեգատի(չիլլեր) միջոցով՝ կախված արտաքին օդի կլիմայական պարամետրերից:

Շենքում իրականացված է երկխողովականի, հորիզոնական մատակարարումով, մայրուղային գծերում ջերմատարի փակուղային սխեմայով ջեռուցման (հովացման) համակարգ: Որպես ջեռուցման (հովացման) սարքեր ընտրված են ֆանկոյլներ՝ հատակային և առաստաղային :

Համակարգի ողջ խողովակաշարը ջերմամեկուսացվում է:

Ամառային ռեժիմում ֆանկոյլներից առաջացած կոնդենսատը պլաստմասե խողովակներով հեռացվում է դեպի ջրհոս կամ կոյուղի:

Օդափոխություն և օդորակում:

Շենքում իրականացվում է ներածող-արտածող ընդհանուր փոխանակային օդափոխություն՝ ներածող օդի նախնական տաքացումով՝ ձմռանը և հովացումով՝ ամռանը: Նախատեսված է ներածման՝ ԿՀ-1, ԿՀ-2, ԿՀ-3, և արտածման (ԱՀ-1-10) համակարգեր: Ներածման համակարգերի օդատարերը մեկուսացվում են:

Բոլոր օդորակման ագրեգատները՝ ապահովելով ներածվող թարմ օդի սանիտարական նորմատիվային քանակություներ: Ընդ որում, արտաքին օդը սենյակներ է ներածվում.

1 . Տարվա տաք ժամանակաշրջանում՝ t_в=+22 °C ջերմաստիճանով:

2 .Տարվա ցուրտ ժամանակաշրջանում՝ t_в=+20 °C ջերմաստիճանով:



Յուրաքանչյուր ներածման ագրեգատի համար նախատեսված է պաշտպանիչ կափույրներ, որոնք էլեկտրականության բացակայության դեպքում փակվում են մաքուր օդի ճանապարհը ՝ այսպիսով ապահովելով ագրեգատը սառցակալումից: Իր հերթին ներածման ագրեգատների համար նախատեսված է ջերմակարգավորիչ հանգույց:

Շենքի համար ջեռուցման, հովացման և օդափոխության համար անհրաժեշտ ջերմության և ցրտի քանակությունները բերված են հետևյալ աղյուսակում.

	Ջերմության ծախս, կկալ/ժ (կՎտ)		Ցրտի ծախս, կկալ/ժ (կՎտ)	
	Ջեռուցում	Օդափոխություն	Սառնամատակարարում	Օդափոխություն
	24 160 (28.1)	47 558 (55.3)	40 280 (46.8)	24 770 (28.8)
	Ընդամենը 71 724 (83.4)		Ընդամենը 64 950 (75.5)	

Ցուցումներ մոնտաժային աշխատանքների համար

- Մետաղական խողովակները մոնտաժից առաջ մաքրել ժանգից և պատել հակակոռոզիոն լաքով:
- Օդատարների հենարանները իրագործել՝ օգտագործելով շինարարական կոնստրուկցիաները, հենարանների միջև ապահովելով 2.5մ-ից ոչ ավել քայլ:
- Մատակարարող, հետադարձ և կոնդենսատի հեռացման խողովակաշարերը ամրացնել շինարարական կոնստրուկցիաներին՝ պահպանելով հետևյալ քայլերը.
 - Ø76- Ø57 – 4.0մ;
 - Ø40- Ø25 – 3.0մ;
 - Ø20 – 2.5մ;
- Օդորակման համակարգերից և ֆանկոյլներից հեռացվող կոնդենսատի գծերի թեքությունը ընդունել i=0,02՝ ցածր կողմը ուղղելով դեպի կանգնակ:
- T₁ և T₂ խողովակաշարերի հիդրավլիկ փորձարկումը իրագործել 0,6ՄՊա ճնշումով:

Չափ.մ.	Մաս.թ.	Թերթեր	Փաստ.	Ստորագր.	Ամսաթիվ	Պատվիրատու՝ Երևանի Մխիթար Դերացու անվան պետական բժշկական համալսարան /N ԵՊԲԳ-ՊԸԱՇՁԲ-16/1			
						Բժշկական համալսարանի սիմուլացիոն կենտրոն	Էտապ	Թերթ	Թերթեր
ՆԳՃ		Հ. Հովսեփյան					Ա.Գ.	ՋՕ-1	8
Նախագծող		Ա. Մարգարյան				Բացատրագիր ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	<<Սու.Ֆետ>> ՍՊԸ		